

Համարը N 895-Ն Տիպը Որոշում Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2005.07.20/46(418) Հոդ.889 Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 21.07.2005	Տեսակը Հիմնական Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Երևան Ընդունման ամսաթիվը 16.06.2005 Ստորագրման ամսաթիվը 02.07.2005 Վավերացման ամսաթիվը 09.07.2005 Ուժը կորցնելու ամսաթիվը
--	---

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԵՎ ԳՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում էմ»
 Հայաստանի Հանրապետության
 Նախագահ Ռ. Քոչարյան
 9 հուլիսի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունիսի 2005 թվականի N 895-Ն

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
 ՆԿԱՏԱՍԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ
 ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԵՎ ԳՆՎԱԾ
 ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «գ» և «է» կետերին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության և պետական չափազիտական վերահսկողության իրականացման նպատակով փորձանմուշների գնման և գնված ապրանքների տնօրինման կարգը` համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող

օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

2005 թ. հունիսի 2

Երևան

Ա. Մարգարյան

Հավելված

ՀՀ կառավարության 2005 թվականի
հունիսի 16-ի N 895-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԳԼՄԱՆ ԵՎ ԳՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության որակի տեսչության (այսուհետ՝ տեսչություն) կողմից տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափազիտական կանոնների ու նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողության նպատակով փորձանմուշների գնման ֆինանսական աղբյուրները և գնված ապրանքների տնօրինման գործընթացը:

II. ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԳԼՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ

2. Փորձանմուշների կանխիկ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցներից:

3. Տեսչության պետի կողմից տրված ստուգումն իրականացնելու մասին գրավոր հանձնարարագրի համաձայն ստուգման իրականացման ընթացքում գնման ենթակա փորձանմուշների քանակի ու պահանջվող գումարի հաշվարկի հիման վրա Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի ղեկավարին է ներկայացվում միջնորդագիր՝ փորձանմուշների գնում կատարելու նպատակով անհրաժեշտ դրամական միջոցներ ստանալու համար:

4. Փորձանմուշների գնման համար անհրաժեշտ դրամական միջոցները հատկացվում են նախարարության աշխատակազմի ղեկավարի գրավոր թույլտվությամբ՝ նախարարության աշխատակազմի ֆինանսահաշվային կառուցվածքային ստորաբաժանման կողմից:

5. Փորձանմուշների գնման համար անհրաժեշտ դրամական միջոցներ ստանալու նպատակով տեսչության պետի կողմից նախարարության աշխատակազմի ֆինանսահաշվային կառուցվածքային

ստորաբաժանում են ներկայացվում միջնորդագիրը՝ աշխատակազմի ղեկավարի թույլտվությամբ, հանձնարարագրի պատճենը, գնում կատարելու համար գումար ստացողի անունը, ազգանունը և պաշտոնը, գնման ենթակա ապրանքատեսակի անվանումները, քանակը և գնման համար անհրաժեշտ նախնական գումարի չափը:

6. Փորձանմուշի գնման ընթացքում կազմվում է փորձանմուշի գնման մասին ակտ՝ համաձայն ձևի:

III. ՓՈՐՁԱՆՄՈՒՇԵՐԻ ԳՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

7. Փորձանմուշի գնումից հետո ստուգման իրականացման ժամանակահատվածում գումար ստացող անձը գնված փորձանմուշը հանձնում է փորձարկման՝ նախարարության հետ պայմանագիր կնքած համապատասխան փորձարկման լաբորատորիա ունեցող կազմակերպությանը՝ նրա հետ կնքելով փորձանմուշի հանձնման-ընդունման մասին ակտ:

8. Գնման և փորձարկման հանձնման ենթակա փորձանմուշի քանակը որոշվում է արտադրանքի տվյալ խմբաքանակը բնորոշող նվազագույն բավարար քանակով՝ համաձայն տեխնիկական կանոնակարգերով և չափումների միասնականության ապահովման բնագավառում ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների:

9. Ստուգման ավարտից հետո (նմուշառում, փորձարկում, ակտի կազմում և ստորագրում) տեսուչը (գնման համար գումար ստացող անձը) մեկօրյա ժամկետում նախարարության աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է զեկուցագիր գնված և փորձանմուշի փորձարկման չհանձնված մասը (հսկիչ նմուշը) նախարարության պահեստի պահ հանձնելու մասին՝ կցելով նաև հաշվետվություն գնում կատարելու համար ստացված գումարների ծախսման մասին:

10. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներով գնված և ի պահ հանձնված ապրանքները նախարարության հանձնաժողովի որոշումների հիման վրա հանձնվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի տնօրինմանը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան
Ձև

ԱԿՏ

ՓՈՐՁԱՆՄՈՒՇԻ ԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

_____ 200 թ.

քաղ. _____
(ակտի ձևակերպման վայրը)

Մտուցման ղեկավար, պետական տեսուչ
Մտուցման մասնակիցներ

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Տնտեսավարող սուբյեկտի
ներկայացուցիչներ

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)